

Որակի հռչակագիր
Ջրի հաշիվներ

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ջրի հաշիվներ
0.2	Ոլորտը	Շրջակա միջավայր
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Բնապահպանության վիճակագրության բաժին Բաժնի պետ Աննա Հակոբյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 524 620, Էլ. փոստ՝ eco@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	<p>Ջրերի վիճակագրություն և ջրերի հաշիվներ կազմելու հիմնական նպատակներն են բացահայտել սոցիալական, տնտեսական կամ բնապահպանական ծանրաբեռնվածությունը և խթանել բնապահպանական ամբողջական հաշիվների վարումը որպես շրջակա միջավայրի գնահատման և քաղաքականության օժանդակման կարևորագույն բաղադրիչ, ինչպես նաև տրամադրել տարեկան տեղեկատվություն ջրերի հաշիվների ընթացիկ կարգավիճակի գնահատման վերաբերյալ:</p> <p>2015 թվականի օգոստոսին մեկնարկեց երկու տարի տևողությամբ վիճակագրության Եվրամիության (ԵՄ) ԹՎինինգ ծրագիրը, որի շահառուն Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեն էր (Արմստատ), իսկ իրականացնող գործընկերը՝ Դանիայի վիճակագրությունը:</p> <p>Ծրագրի նպատակն էր աջակցել Հայաստանի պաշտոնական վիճակագրության արդիականացմանը՝ ներդնելով ԵՄ ստանդարտներին համապատասխանեցված վիճակագրության նոր մեթոդաբանություններ՝ ուժեղացնելով պաշտոնական վիճակագրության տարածումը հանրության շրջանում:</p> <p>Ծրագիրը բաղկացած էր վեց բաղադրիչներից, որոնցից վեցերորդը «Ջրի հաշիվներ» բաղադրիչն էր, որի շրջանակներում իտալացի փորձագետների կողմից իրականացվեց Հայաստանում ջրերի վերաբերյալ վիճակագրության ներկայիս կարգավիճակի գնահատումը, մշակվեց «Հայաստանում ջրի սատելիտային</p>

		<p>հաշիվների համակարգի ձևավորումը» գեկույցը հիմք ընդունելով ՄԱԿ-ի կողմից ընդունված Բնապահպանական-տնտեսական հաշիվների համակարգի և Ջրերի հաշիվների կազմման մեթոդաբանությունները:</p> <p>Փորձագետների կողմից ներկայացվեց ջրային ռեսուրսներին առնչվող հիմնական գործունեությունների ցանկը՝ տարբերակելով ջրերի վերաբերյալ ազգային և միջազգային մակարդակով տվյալների հարցումները: Ջրի վիճակագրությունը (ՋՎ) և ջրի հաշիվները (ՋՀ) կազմում են միասնական ծրագրի մաս, որտեղ ՋՎ-ն ապահովում է ջրին առնչվող բնութագրիչների և ցուցանիշների համացանկը, իսկ ՋՀ-ը չափում է հիդրոլոգիական, հիդրոմետրական համակարգերի և տնտեսության փոխազդեցությունները: 2003թ-ին հաստատված և 2008թ-ին վերափոխված Բնապահպանական հաշիվների եվրոպական ռազմավարությամբ (ԲՀԵՌ) առաջարկվել է ջրամատակարարման և ջրօգտագործման հաշիվները դիտարկել որպես զարգացման գերակա ոլորտ:</p>
0.5	Օգտագործողները և կիրառումը	<p>Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:</p> <p>Ջրերի հաշիվների ընթացիկ կարգավիճակի գնահատման մասին տեղեկատվությունը կիրառվում է բնապահպանության բնագավառում ռազմավարությունների մշակման, մարտավարական խնդիրների լուծման, բիզնես միջավայրի վերլուծության, զարգացման միտումների բացահայտման և այլ նպատակներով:</p>
0.6	Տեղեկությունների աղբյուրները	<p>Ջրերի ֆիզիկական հոսքերի աղյուսակների ժամանակային շարքերը լրացվում են Արմստատի տվյալների շտեմարանում առկա ջրառի, ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև հանրապետության համայնքների կենտրոնացված ջրամատակարարման համակարգով օգտագործողներին բաց թողնված ջրի, կորուստների և կոյուղի բաց թողնված ջրի ծավալների վերաբերյալ տարեկան վիճակագրական ամփոփ տվյալների հիման վրա (տես՝ http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-</p>

		<p>4ae6-aaa3-40c0e377450a; http://www.armstat.am/am/?module=publications&mid=6&id=1829 «ՀՀ բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը» վիճակագրական տարեկան ժողովածուներ):</p> <p>Ցուցանիշների հաշվարկի համար օգտագործվում են արտադրական և ծախսային ՀՆԱ-ն՝ Հայաստանի Ազգային հաշիվներից, որոնք կազմվում են համաձայն Ազգային հաշիվների համակարգի (ԱՀՀ-2008) հիմնարար դասակարգումների, սահմանումների և հասկացությունների, ինչպես նաև այլ մեթոդաբանական հիմքերի:</p>
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	<p>Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:</p> <p>Վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների կողմից ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության փոփոխման կամ ճշգրտումների կատարման դեպքում համապատասխան փոփոխությունների և ճշգրտումների են ենթարկվում նաև Արմստատի կողմից արդեն իսկ հրապարակված ցուցանիշները:</p>
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	Ձրի ֆիզիկական հոսքերի համար օգտագործվել են Վիճակագրական կոմիտեի տվյալները, որոնք ներառված են նաև ՄԱԿ-ի Վիճակագրական ստորաբաժանման, Շրջակա միջավայրի ծրագրերի, Տնտեսական համագործակցության և զարգացման, Եվրաստատի Ներքին ջրերի միասնական հարցաթերթի աղյուսակներում: Նախագծման ընթացքում օգտագործվել են 2012-2015թթ. տվյալները, քանի որ անհրաժեշտ

		<p>մակրոցուցանիշներն առկա էին այդ տարիների համար: Հարցաթերթի աղյուսակներում արտացոլված ցուցանիշներն են.</p> <ul style="list-style-type: none"> • Քաղցրահամ ջրերի վերականգնվող պաշարներ, • Քաղցրահամ ջրերի ջրառ՝ ըստ աղբյուրի և ըստ ոլորտի, • Ջրօգտագործում՝ ըստ ջրամատակարարման աղբյուրների և ըստ տնտեսական գործունեության տեսակների, • Կեղտաջրերի մաքրման կայանների կողմից սպասարկվող բնակչություն, • Կեղտաջրերի նստվածքի առաջացում և հեռացում (չոր նյութում), • Կեղտաջրերի առաջացում և հեռացում: <p>Ջրերի վերաբերյալ տնտեսական հաշիվները ներառում են միջանկյալ սպառման ու օգտագործման ծախսերը և տնային տնտեսությունների ու արդյունաբերության ջրամատակարարումից և կեղտաջրերի մաքրումից ձևավորված եկամուտը: Ի լրումն այս ցուցանիշների, ընդգրկված են եղել նաև հիմնական միջոցների կապիտալ վերանորոգման և բնապահպանական ընթացիկ ծախսերը:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Հիմնական հասկացություններ</p> <p>Ջրերի հաշիվներն ընդհանուր առմամբ ունեն երկու բաղադրիչ՝ ջրային ռեսուրսներ և ջրի ֆիզիկական մատակարարման ու օգտագործման աղյուսակներ:</p> <p>Համաձայն ԲՏՀՀ շրջանակի, ջրային ռեսուրսներն են.</p> <ul style="list-style-type: none"> • Մակերևութային ջրերը (արհեստական ջրամբարները, լճերը, գետերը, ձյունը և սառույցը) • Ստորգետնյա ջրերը • Տեղումները • Հարևան երկրի տարածքից մտնող և դուրս եկող ջրերը • Գոլորշիացումը • Բույսերի միջոցով տեղի ունեցող փաստացի գոլորշիացումը • Ջրառը և ջրահեռացումը (տնտեսվարող սուբյեկտի կողմից): <p>Քանի որ վերը նշված ցուցանիշներից մի քանիսն են հրապարակվում Արմատատի կողմից, Ջրերի հաշիվների մեջ</p>

ներառված են միայն ջրի ֆիզիկական մատակարարման ու օգտագործման աղյուսակները, որի ծածկույթում ներառված են.

- կազմակերպությունները, տնային տնտեսությունները, անհատները, որոնք անմիջականորեն ջուր են օգտագործում մակերևութային և ստորերկրյա ջրաղբյուրներից իրենց անմիջական օգտագործման համար (օրինակ, տանը, արդյունաբերությունում, գյուղատնտեսությունում կամ այլ նպատակներով),

- ջրի մատակարարներ, որոնք մակերևութային և ստորերկրյա ջրերից կատարում են ջրառ, այն նախապատրաստում և տրամադրում են օգտագործողներին հետագա օգտագործման համար (ոռոգում, ձկնաբուծություն),

- այլ խոշոր կազմակերպություններ, որոնք ջուր են վերցնում անմիջապես ջրաղբյուրից և օգտագործելուց հետո ամբողջապես վերադարձնում ջրաղբյուր (օրինակ, հանքարդյունաբերությունը):

Հիդրոէլեկտրակայանների կողմից կատարված ջրառը չի հաշվարկվում՝ համաձայն Ջրերի հաշիվների բնապահպանական և տնտեսական համակարգի հայեցակարգի շրջանակի մեթոդաբանության, սակայն ներառված է այն ջրի ծավալը, որը մատակարարվում է այլ կազմակերպությունների՝ ոռոգման կամ ձկնաբուծության նպատակներով օգտագործման համար:

- [Ջրօգտագործման և ջրամատակարարման ֆիզիկական հոսքերը](#)
- [Ջրառ մակերևութային և ստորերկրյա աղբյուրներից սեփական օգտագործման կամ բաշխման նպատակով](#)
- [Տնտեսության ներքում ջրօգտագործման և ջրամատակարարման ֆիզիկական հոսքերի մատրիցա](#)
- [Ջրի մատակարարման հիբրիդային աղյուսակ](#)
- [Ջրի օգտագործման հիբրիդային աղյուսակ](#)

Ջրերի վերաբերյալ տնտեսական հաշիվները ներառում են միջանկյալ սպառման ու օգտագործման ծախսերը և տնային տնտեսությունների ու արդյունաբերության ջրամատակարարումից և կեղտաջրերի մաքրումից ձևավորված եկամուտը:

		<p>Աշխարհագրական ընդգրկունություն Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը:</p> <p>Հրապարակման խմբավորումներ Ջրի հաշիվները հրապարակվում են ըստ ՀՀ ամփոփ տեղեկատվության: Իրականացվում է մարզային, տարածքային միավորների, ջրային օբյեկտների կողմավորում՝ համաձայն նախապես սահմանված կարգի, թիրախում են Հայաստանի շուկայում տնտեսական գործունեության հիմնական տեսակների (ՏԳՏԴ) խմբ. 2-ի 01 և 36 հատվածների խոշոր ջրառ իրականացնող կազմակերպությունները:</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Տարեկան ցուցանիշները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա 4-րդ եռամսյակում:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան
3 .Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Իրականացվում են աշխատանքներ վիճակագրական տվյալների ճշգրտման և հրապարակվող ցուցանիշների կառուցվածքի (հրապարակումների ձևաչափեր, էլքային աղյուսակներ և այլն) ձևավորման շուրջ: Վերջնական տվյալները հրապարակվում են Armstatbank.am կայքում:</p> <p>Առկա են տեղեկատվության ստուգաճշտման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ: Մուտքագրման ծրագրային ապահովման փաթեթում առկա է մուտքագրված տվյալների թվաքանակային ու տրամաբանական ստուգումների իրականացման համար անհրաժեշտ գործիքներ:</p>
3.2	Անճշտության աղբյուրները	Անճշտության աղբյուր կարող է հանդիսանալ տնային տնտեսությունների կողմից իրականացվող սեփական ջրառը: Այս ցուցանիշի համար կիրառվում է հաշվարկային մոտեցում՝

		համաձայն մեթոդաբանության:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ընթացիկ տարվա հաշվետու ժամանակահատվածում կազմակերպությունների կողմից հաշվետու տարվա վերաբերյալ ներկայացված տվյալների ճշգրտությունն իրականացվում է նախորդ տարվա համապատասխան տվյալների հետ համադրման միջոցով:
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Վերջնական աղյուսակները ներկայացվում են տարեկան հրապարակումներում և տվյալների բազայում՝ ըստ տարիների, որտեղ հնարավոր է հետևել ցուցանիշի դինամիկ շարքի կտրուկ փոփոխություններին և գտնել կապը այլ ցուցանիշների փոփոխության հետ:
4.2	Համադրելիություն այլ վիճակագրության հետ	Ջրի հաշիվների հիմական ցուցանիշների համադրելիություն այլ վիճակագրության հետ առկա չէ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Հրապարակվում են միայն վերջնական տվյալները:
5 .Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	<p>Հրապարակումներ</p> <p>Տարածվող արտադրանքների համար իրականացվում են արտադրման բոլոր քայլերը՝ բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման ստանդարտներին:</p> <p>Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ հայերեն և անգլերեն տեղեկատվությունը հրապարակվել է էլեկտրոնային եղանակով «Հայաստանում ջրի սատելիտային հաշիվների համակարգի ձևավորումը» զեկույցում:</p> <p>«Հայաստանի բնապահպանական վիճակագրությունը և ցուցանիշների շարժընթացը» վիճակագրական տարեկան տեղեկագիր, (հայերեն և անգլերեն):</p>

		<p>Տվյալների բազաներ http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Ինտերնետային հասցե Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն, ռուսերեն և անգլերեն հետևյալ հասցեով. https://www.armstat.am/am/?nid=82</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Ռեսպոնդենտներից հավաքվող վիճակագրական հաշվետվությունները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով, որոնք արխիվացվում են:
5.3	Փաստաթղթավորումը	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:
5.4	Այլ տեղեկատվություն	-
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: